«ՖԱԿՏԻ» ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԹԵՐԹԸ

ՍԻՎՎԱ ՆԱՀԱՊԵՏՅԱՆ

XIX դ. վերջին և XX դ. սկզբին Ռուսաստանի արդյունաբերական կենտրոններում ծայր առած բանվորական շարժման ալիքը լայնորեն տարածվեց նաև Անդրկովկասում։ Այստեղ բանվորների տարերային, անջատ-անջատ ելույթներից հետո սկսվեցին հեղափոխական շարժումները։ Դրանց ուղղություն տվողն ու ղեկավարողները մարքսիզմի գաղափարները յուրացրած այն մտավորականներն ու բանվորներն էին, որոնք իրենց հեղափոխական մկրտություն ստացել էին Պետերբուրգի «Բանվոր դասակարգի ազատագրության պայքարի միության» մեջ և սոցիալ-դեմոկրատական խմբակներում։ Նրանց անմիջական նախաձեռնությամբ Անդրկովկասի բանվորաշատ քաղաքներում կազմակերպվում են մարքսիստական խմբակներ։ Երևանում 1904 թ. սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմակերպման ուղղությամբ մեծ աշխատանք է կատարում հեղափոխական գործիչ Գ. Սոկոլովսկին։

1905 թ. մայիսին Երևանում Ստ. Շահումյանի գլխավորությամբ դումարված ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության ժողովն ընտրում է ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպության քաղաքային կոմիտե, որի կազմի մեջ մտնում են Գ. Սոկոլովսկին (կոմիտեի նախագահ), Ա. Մալխասյանը, Կ. Ալավերդովը, Մ. Միրաքյանը (Շանթ), Վ. Բարժանսկին, Ա. Մռավյանը, Վ. Նինուան, Լ. Տեր-Հովսեփյանը, Լ. Յաղուբյանը և ուրիշներ[1]։

Հայտնի է, որ ռուսական առաջին բուրժուադեմոկրատական հեղափոխության պարտությունից հետո բոլշևիկները փոխում են իրենց դումայական տակտիկան։ Նրանք որոշում են մասնակցել երկրորդ Պետական դումային և օգտագործել նրա ամբիոնը՝ հեղափոխական ագիտացիա մղելու, ինքնակալությանն ու հակահեղափոխական բուրժուազիային մերկացնելու նպատակներով։ Նախընտրական կամպանիայի ժամանակ ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը որոշում է ընդունում երկրորդ Պետական դումայում իր ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու և Դուման կուսակցության քաղաքական ծրագրի պրոպագանդման համար օգտագործելու մասին։ Երևանի նահանգից պատգամավոր է նախատեսվում Գ. Սոկոլովսկին։ Սակայն պատգամավորների ընտրության համար հրավիրված լիազորների ժողովի նախօրյակին նահանգական իշխանություններն անհիմն պատճառաբանությամբ ընտրական ցուցակներից հանել են տալիս Գ. Սոկոլովսկու անունը։ «Այսպես կուրյոզային կերպով,— գրում է Գ. Սոկոլովսկին,— ավարտվեց մեր մասնակցությունը Պետական դումայի ընտրական հանձնաժողովին»[2]։

Երկրորդ Պետական դումայի ընտրությունների ժամանակ բոլշևիկների տակտիկայի պարզաբանման նպատակով ՌՍԴԲԿ Երևանի կազմակերպությունը որոշում է հրատարակել իր տպագիր օրգանը։ «Հարցը միայն այն էր,— գրել է Գ. Սոկոլովսկին,— թե ի՞նչ լեզվով հրատարակել»[3]։ *Որոշվում է թերթը լույս ընծայել ռուսերեն «Ֆակտի» անունով։ Թերթն իր գոյությունը պետք է պահպաներ կազմակերպության միջոցներով, որոնք կազմում էին ընդամենը*

---

1 Գ. Բ. Ղարիբջանյան, Լենինը և Անդրկովկասը (1905—1917), Երևան, 1973, էջ 59։

2 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, Երևան, 1956, էջ 107։

3 Նույն տեղում։

120 ռ. անդամավճար։ Քանի որ այդ գումարն ապահովում էր թերթի ծախսերի միայն 50%-ը, կազմակերպվում է հատուկ հանգանակություն և հավաքվում է մոտ 200 ռ. գումար[4]։

1907 թ. փետրվարի 2-ին լույս է տեսնում «Ֆակտիի» առաջին համարը, որն ուներ հետևյալ բաժինները՝ կյանքի և մամուլի հարցեր, մատենագիտություն, Կովկասի շուրջ, փաստեր, կենսագրական, արտասահմանում, ֆելիետոն։ Թերթի պաշտոնական խմբագիր-հրատարակիչ է նշանակվում Վ. Բոգատիրյովը, բայց փաստական խմբագիրն ու գաղափարական ուղղություն տվողը Գ. Սոկոլովսկին էր։ Նա իր գրած առաջնորդողներն ու հոդվածները ստորագրում էր Յուրի Մոլոտով ծածկանունով։ «Ֆակտիին» աշխատակցում էին Գ. Ղարաջյանը, Ա. Զիսենկելին, Ն. Մագնեյշտեյնը, Վ. Նինուան, Է. Սուլթանովը, Ղ. Ալավերդովը և ուրիշներ։

Ինչպես արդեն նշվեց, «Ֆակտի» թերթի հիմնական նպատակը երկրորդ Պետական դումայի նախապատրաստման օրերին բոլշևիկների տակտիկայի պարզաբանումն էր։ «Մեր «Ֆակտին»,— գրել է Գ. Սոկոլովսկին,— իր առջև խնդիր էր դրել՝ ժամանակին արձագանքել երկրի և մեր նահանգի ընթացիկ կյանքի մոմենտներին, իսկ ընթացիկ կյանքը այն ժամանակ հագեցած էր սպասումներով, թե երկրորդ Պետական դումային կհաջողվի՞ մոբիլիզացնել երկրի ակտիվ ուժերը՝ ցարիզմի հետ վերջնական գոտեմարտի բռնվելու, քանի որ 1905 թ. հեղափոխության ճնշումը դիտվում ու գնահատվում էր որպես կառավարության պյուրոսյան հաղթանակ...

Սակայն պետք է ընդունել, որ այն ժամանակ լեգալ թերթը փաստորեն դրկված էր, այսպես կոչված, ներկուսակցական տարաձայնություններն ամենայն մանրամասնությամբ լուսաբանելու հնարավորություններից, տարաձայնություններ, որոնք բացառիկ սրությամբ ծառացած էին կուսակցության յուրաքանչյուր անդամի առջև»[5]։

«Ֆակտին» պրոպագանդում էր հեղափոխական պայքարի գաղափարները, կոչ անելով հեղափոխության գործը հասցնել հաղթական ավարտի։ Թերթը գտնում էր, որ երկու տարվա հեղափոխությունը չանցավ ապարդյուն և այն համոզմունքն էր հայտնում, որ, չնայած հեղափոխության պարտությանը, դասակարգային պայքարում, միևնույնն է, հաղթելու են ժողովրդական լայն մասսաները[6]։

Թերթի էջերում բողոք է հայտնվում երկրորդ Պետական դումայի պատգամավորության թեկնածու Շախտախտինսկու դեմ, որն առաջադրվել էր Նախիջևանի խաների կողմից։ «Ֆակտին» իրավացիորեն գտնում էր, որ պրոլետարիատն իր քաղաքական մակարդակով այնքան բարձր է, որ կարող է ժողովրդի շահերը պաշտպանող թեկնածուներ առաջադրել իր միջից։ Բացի այդ, այն իրավացիորեն նշում էր, որ բուրժուական գործիչները ոչինչ չեն կարող տալ ժողովրդին։ «Կազմակերպված պրոլետարիատը,— գրում էր թերթը,— վաղուց արդեն գիտի ժողովրդական ազատության բուրժուական պաշտպանների ճշմարիտ գինը»[7]։ «Ձե՛նք ցանկանում բեկերին ու խաներին,— հայտարարում էր թերթը,— որոնք մեզ կողոպտում ու մեր կաշին քերթում են»[8]։

«Ֆակտին» նշում էր, որ դումայական ընտրությունների նախօրյակին յուրաքանչյուր կուսակցություն ցույց տվեց իր իսկական դեմքը, և որ բանվոր դասակարգի շահերը պաշտպանող միակ կուսակցությունը սոցիալ-դեմոկրատականն է։ Թերթում փաստեր խորագրի տակ լուրեր էին տպագրվում երկրորդ Պետական դումայի ընտրությունների վերաբերյալ։ Կենտրոնական հարց դարձնելով Դումայի ընտրությունները, այն միաժամանակ բացահայտում էր բուր-

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում։

6 «Факты», 18.II.1907.

7 Նույն տեղում։

8 Նույն տեղում։

ժուական դեմոկրատիայի իրական դեմքը։ Ընթերցողներին ծանոթացնելով 1907 թ. փետրվարի 6-ին Մոսկվայում քաղաքային դումայի ընտրությունների ժամանակ բանվորների ու կադետների միջև տեղի ունեցած վեճին, «Ֆակտին» անդրադառնում էր բանվորների արտահայտած բողոքին։ «Այժմ ձեզ ասելիք է ներկայանում,— դիմում էին բանվորները կադետներին,— բացահայտելու ձեր հակառակ երեսն այնպես պարզ, որ կտեսնեն ձեզ և վերջին կույրերը, կհասկանան ձեզ և բոլոր դյուրահավատ ու երկչոտ հոգիները, որոնք հրապուրված սեհարյուրակային վտանգի մասին ասված ձեռ երեսպաշտ ու կեղծ կոչերով, ձայն տվեցին ձեզ...։ Դուք պայքարում էիք ոչ թե սեների, այլ կարմիր պրոլետարիատի դեմ»[9]։ Մերկացնելով կադետների կազմալուծիչ քաղաքականությունը և ցույց տալով նրանց դասակարգային էությունը, Թերթը գտնում էր, որ կադետներն ա՛յլևս հիմք չունեն պնդելու, թե իրենք արտահայտում են ժողովրդի ձգտումները, նրանք իրենց նախիրնտրական տակտիկայով արդեն ապացուցեցին, որ կապերը խզել են դեմոկրատիայից[10]։ Հայտնի է, որ կադետների մասին Վ. Ի. Լենինը գրել է. «Առաջին դուման բավականաչափ ցույց տվեց, որ կադետը չի պայքարում սեհարյուրակային վտանգի դեմ, այլ աներևակայելի ստոր ճառեր է ասում միապետի՝ սեհարյուրակայիններեի ակնհայտ առաջնորդի, անմեղության և անպատասխանատվության մասին»[11]։

Թերթը ժողովրդին կոչ էր անում քվեարկել սոցիալ-դեմոկրատների թեկնածուների օգտին, որպեսզի Դումայում նրանք կազմեն մեծամասնություն։ «Այդ ժամանակ միայն,—նշում էր «Ֆակտին»,—Դուման դեպի իրեն կգրավի ժողովրդական լայն մասսաների համակրանքը և կլինի ոչ միայն համաժողովրդական տրիբունա, այլ նաև կազմակերպող կենտրոն»[12]։ Այսինքն, Թերթը պահանջում էր Դուման դարձնել հեղափոխության նախապատրաստման միջոց, ժողովրդական լայն մասսաներին մեծ մարտի ոգեշնչող հրապարակային ամբիոն։ Այդ պահանջը բարձրացրել է Վ. Ի. Լենինը, գրելով. «Մենք կրկին նոր ուժեր կհավաքենք, նոր, էլ ավելի ահեղ, վճռական ելույթի համար, երբ ձախ Դումայի խարույկը բորբոքվելով՝ կվերածվի համառուսաստանյան հրդեհի։ Պետք է բոլոր ուժերը հավաքել և կենտրոնացնել գալիք վճռական ճակատամարտի համար»[13]։ Նույն տեսանկյունից մոտենալով հարցին, Թերթը գրում էր. «Առջևում հաղթանակն է, իսկ ներկայում՝ այդ հաղթանակի ապահովման նպատակին ուղղված բոլոր ուժերի լարումը։ Մենք գտնվում ենք հեղափոխության մեծագույն գործողության՝ ստեղծարար գործողության, նախաօրյակին»[14]։

Ուշագրավն այն է, որ ռեակցիայի ծանր ժամանակաշրջանում, կատաղության կազմակերպած խիստ հետապնդումների պայմաններում «Ֆակտին» կարողանում էր ընթերցող լայն հասարակությանը ծանոթացնել բոլշևիկների տակտիկային։ Թերթը բացահայտորեն հանդես էր գալիս ժողովրդական լայն մասսաների քաղաքական ակտիվությունը բարձրացնելու, նրանց հեղափոխական ուժերը կազմակերպելու անմիջական կոչերով։

«Ֆակտին» միաժամանակ արձագանքում էր Լուսաստանում և Անդրկովկասում տեղի ունեցող հեղափոխական շարժումներին։ Այսպես, նրանում զետեղված մի շարք հոդվածներ նվիրված են Գուրիայի գյուղացիական շարժումներին։ «Ականատես» ստորագրությամբ տպագրված հոդվածում ցարական բյուրոկրատիայի ներկայացուցիչները համարվում են XX դ. չինգիզ-խաներ, որոնք Բալանում ու կողոպտում են ժողովրդին։ «XX դարի չինգիզ-խաներն ամբողջ Գուրիան հրի ու սրի մատնեցին,— գրում է հոդվածագիրը,— կողոպտվում ու ոչնչացվում էր բնակչության ամբողջ բարիքը»[15]։ Սակայն, այնուհետև,

9 Նույն տեղում։

10 Նույն տեղում։

11 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 14, էջ 147։

12 «Факты», 18.II.1907.

13 Վ. Ի. Լենին, Երկ, հ. 15, էջ 31։

14 «Факты», 18. II. 1907

15 Նույն տեղում։

կարդում ենք հոդվածում, գուրիացիները համառորեն դիմադրում են, հավատալով, որ ճշմարտությունն ի վերջո կհաղթանակի։ «Նրանք,— շարունակում է թերթը,— լավ գիտեն, որ բյուրոկրատիան իր գործողություններով իր դեմ ագիտացիա է մղում և ավելի մոտեցնում իր անկման պահը»[16]։

«Ֆակտի» թերթը ֆելիետոն ընդհանուր վերնագրի տակ տպագրում էր քաղաքական թեմաներով հոդվածներ, որոնց մեծ մասը պատկանում էր Գ. Սոկոլովսկու գրչին։ Գուրիայում տեղի ունեցած գյուղացիական շարժումներին նվիրված նրա հոդվածն[17] ամբողջովին ներծծված է ժողովրդասիրության, եղբայրասիրության, ինտերնացիոնալիզմի գաղափարներով։ Հեղինակը նկատում է, որ Գուրիայում կյանքը դաժանորեն այլակերպել է մարդուն։ Գուրիացիներն իրենց սեփական կաշվի վրա զգացել են ցարական գենքի ուժն ու բռնակալ ինքնակալության լծի ծանրությունը։ Եվ այդ իսկ պատճառով, ինչպես հեղինակն է գրում, ամբողջ Գուրիայում շշուկ անգամ չեք լսի ցարական իշխանության հանդեպ եղած բարեհամբույր վերաբերմունքի մասին, ընդհակառակը, ամենուր շարության ու ատելության խոսքեր են հնչում ռուսական կայսրության հասցեին։ Ցարական բյուրոկրատիայի հանդեպ ատելության բաժակն արդեն լցվել է և համառձակ կարելի է ասել, թե «ինչ-որ բան կլինի, ինչ-որ բան կլինի»։

Գ. Սոկոլովսկու մեկ այլ հոդվածում[18] բացահայտ քննադատվում է 1861 թ. փետրվարի 19-ի գյուղացիական ռեֆորմը, որը գյուղացիներին չտվեց ո՛չ հող, ո՛չ ազատություն։ Մանրամասն հաշվարկների հիման վրա հեղինակը ցույց է տալիս, որ ռեֆորմից հետո գյուղացիները միայն իրենց անձի ազատագրման համար պետք է վճարեին 219 մլն ռուբլի։

«Լոձի լոկաուտը» հոդվածում[19] թերթը հավաստում էր, որ խաղաղ ճանապարհով ձեռք բերված ռեֆորմները ոչինչ չեն կարող տալ աշխատավոր ժողովրդին։ Ուստի, դրվատում էր տիրող կարգերի տապալման համար ինքնակալության դեմ պայքարի ելած ռազնոչին գործիչների հեղափոխական շարժումը։ «Այդ պայքարը,— նշում էր թերթը,— ուղղված էր կառավարության դեմ և մղվում էր կառավարման գոյություն ունեցող կարգերը փոխելու համար»[20]։

«Ֆակտին» տպագրել է նաև գրախոսական հոդվածներ։ Այսպես, անդրադառնալով Վ. Վեյլինգի «Մարդկությունն ինչպիսին նա կա և ինչպիսին նա պետք է լինի» աշխատությանը, թերթը հեղինակին քննադատում է այն բանի համար, որ նա նկատի չի ունեցել դասակարգային պայքարը՝ որպես հիմնական միջոց հասարակության վերափոխման գործում[21]։

«Ֆակտի» էջերում տեղ է գտել նաև Ռ. Լյուքսեմբուրգի՝ օպորտունիստ Է. Բեռնշտայնի հայացքները քննադատող աշխատության գնահատությանը նվիրված հոդվածը (հեղինակ՝ Կ. Ալավերդով)։ «Ռ. Լյուքսեմբուրգի բրոշյուրը,— գրում էր Կ. Ալավերդովը,— բացահայտելով օպորտունիստական աշխարհայեցության ամբողջ կեղծիքը, միաժամանակ ընթերցողին պարզաբանում է գիտական սոցիալիզմի նախադրյալների ճշմարիտ ըմբռնումը»[22]։

«Ֆակտին» իր էջերում բարձրացրեց նաև ամնիստիայի հարցը, կառավարությունից պահանջելով ազատել քաղաքական բանտարկյալներին, ռուսական առաջին հեղափոխության ժամանակ բանտարկված ազատագրական պայքարի մարտիկներին։

---

16 Նույն տեղում։
17 Նույն տեղում, 4. III. 1907։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում։
20 Նույն տեղում։
21 Նույն տեղում։
22 Նույն տեղում, 2. II. 1907։

«Ֆակտի» թերթը որոշ ժամանակ լույս տեսնելուց հետո (պահպանվել են երեք համարները) Երևանի նահանգապետի կարգադրությամբ փակվեց։

Չնայած իր կարճատև գոյությանը, «Ֆակտի» թերթը կպալի դեր կատարեց Երևանի աշխատավոր մասսաների մեջ հեղափոխական գաղափարները տարածելու ուղղությամբ և որոշակի հետք թողեց հայ մամուլի և հասարակական մտքի պատմության մեջ։

БОЛЬШЕВИСТСКАЯ ГАЗЕТА «ФАКТЫ»

СИЛЬВА НАЗАРЯН

Резюме

2 февраля 1907 г. Ереванская организация РСДРП начала издавать на русском языке газету под названием «Факты». Официальным редактором был назначен В. Богатырев, фактически же газету редактировал Г. Н. Соколовский.

Во время подготовки выборов второй Государственной думы главной целью газеты являлась пропаганда тактической линии большевиков. На страницах газеты разоблачалась предвыборная агитация кадетов. Газета «Факты» активно откликалась на выступления рабочих против самодержавия, капиталистов и помещиков, взяла курс на развертывание народного революционного движения, на сплочение трудящихся вокруг большевиков.

Несмотря на свое недолгое существование (сохранилось всего три номера), газета «Факты» сыграла заметную роль в идейно-политическом воспитании трудящихся города.